# ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԷԹՆԻԿ ԽՃԱՆԿԱՐԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ[1]

**Վահագն Դադայան**
*Ասպիրանտ*
*ԱՐՊՀ*

***Բանալի բառեր՝*** *Դարաբաղ, էթնոքաղաքական, ազգային, էթնիկ խումբ, էթնոանուն, Ադրբեջան, ժողովրդագրական, թալիշներ, թաթեր, քրդեր, լեզգիներ:*

Ազգային բնույթի խնդիրները բնորոշ են մի քանի պետություններ ընդգրկող և տարբեր ազգեր միավորող պետական կազմավորումներին: Այդպիսին էր նաև Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը (այսուհետ՝ ԽՍՀՄ), որն իր մեջ ընդգրկելով 15 միութենական հանրապետություններ, փորձում էր լուծումներ գտնել այդ պետություններից գրեթե յուրաքանչյուրում առկա ազգային բնույթի հարցերի լուծման համար: Լենինյան ազգային քաղաքականության ծրագիրն առաջադրում էր բոլոր ազգերի ու ազգությունների հավասարության, ազգային արտոնությունների ու սահմանափակումների վերացման, ազգերի ինքնորոշման՝ ընդհուպ մինչև անջատվելու և ինքնուրույն պետություն կազմելու իրավունքի ճանաչման, ազգային լեզուների և մշակույթի ազատ զարգացման ապահովման և բոլոր ազգերի աշխատավորների համախմբման ու միասնական հեղափոխական կազմակերպությունների մեջ միավորելու սկզբունքները[2]:

Իրականում ստալին-լենինյան ազգային քաղաքականության անցկացման հարցերում խորհրդային կուսակցական անվանացանկի ծանր, միևնույն ժամանակ նաև «խտրություն չդնող» ձեռքը գրեթե անտեսում էր ԽՍՀՄ տարածքում առկա էթնոքաղաքական իրողությունները: Հետագայում որոշ իրողություններ ճիշտ ընկալվեցին, և խորհրդային ղեկավարությանը հաջողվեց թուլացնել և ժամանակավորապես չեզոքացնել ազգային հարցերը: Սակայն էթնոքաղաքական բնույթի հարցերը մեծ նշանակություն ունեն, հատկապես խոշոր դաշնության դեպքում, երբ նույնիսկ մեկ չլուծված կամ սառեցված խնդիրը կարող է արթնացնել

[1] *Հոդվածը ընդունված է 11.12.14:*
[2] *Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 1-ին, Երևան, 1974, էջ 108:*

մնացած բոլոր՝ կարգավորված թվացող ազգային հակամարտությունները[1]:

Հետևաբար, ԽՍՀՄ գոյության տարիներին ազգային հարցը եղել էր այն «դանդաղ գործող ռումբը», որը հետագայում վերջինիս փլուզման հիմնական շարժառիթներից մեկը հանդիսացավ:

Ադրբեջանի բոլշևիկյան կուսակցության և Ադրբեջանում գտնվող թուրք զինվորականների զինված խմբերի իրականացրած զինված հեղաշրջման արդյունքում 1920թ. ապրիլի 27-ին պատմության թատերաբեմը լքեց Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը (այսուհետ՝ ԱԴՀ) (1918-1920 թթ.)՝ իր տեղը զիջելով նորաստեղծ Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը (1920-1991 թթ.):

Նկատենք, որ ԱԴՀ կոչվող տարածքում բնակվում էին տարբեր ազգություններ ու էթնիկ խմբեր՝ հայեր, թաթեր, թալիշներ, քրդեր, ռուսներ, ինչպես նաև կովկասյան թաթարներ և այլն: Նրանցից յուրաքանչյուրն ուներ տվյալ տարածքում պատմական ձևավորման և զարգացման իր առանձնահատկությունները՝ բնիկ ու եկվոր, նստակյաց կամ քոչվոր, առկա էին նաև կրոնական տարբերություններ՝ քրիստոնյաներ և մուսուլմաններ, շիաներ և սունիներ: Այդ իսկ պատճառով, «ադրբեջանցի» տերմինը սկզբնապես չէր նշանակում և չէր էլ կարող նշանակել ազգություն, քանի որ որպես այդպիսին այն տվյալ ժամանակահատվածում գոյություն չուներ: «Ադրբեջանցին» էթնանուն չէր, այլ Անդրկովկասի նորաթուխ պետական կազմավորման՝ ԱԴՀ-ի տարածքում բնակվողների ընդհանուր անվանումն էր: Նույնիսկ 1926թ. Խորհրդային Միությունում տեղի ունեցած առաջին մարդահամարի ժամանակ հաշվառված ազգությունների թվում կրկին չկան «ադրբեջանցիները»: Մարդահամարի արդյունքները նշում էին այնպիսի ժողովուրդների մասին, ինչպիսիք էին յակուտները, մորդովացիները, բուրյաթները, վայնախները, պերմյակները, բայց ոչ ադրբեջանցիները: Ցանկում տեսանելի է «թյուրքեր» էթնո անունը, որի անվան տակ մասամբ արձանագրեցին այն, ինչ հետագայում կոչվեց ադրբեջանցի: 1929թ. Թիֆլիսում լույս տեսած «Անդրկովկասը

[1] *Մ.Աղաջանյան Ադրբեջանի ազգային փոքրամասնությունները. իրավաքաղաքական ասպեկտներ, «21-րդ ԴԱՐ», թիվ 3, 2006թ, էջ 124-25:*

թվերով» վիճակագրական պաշտոնական տեղեկատույում կրկին բացակայում է «ադրբեջանցի» էթնո անունը[1]:

Հետևաբար ազգային հարցը Խորհրդային Ադրբեջանում էությամբ և բովանդակությամբ էականորեն տարբերվում էր ԽՍՀՄ միութենական մյուս հանրապետություններում առկա ազգային բնույթի խնդիրներից, որն էլ ենթադրում էր ավելի սուր դրսևորումներ:

Ընդհանրապես բազմաէթնիկ հասարակությունները, կազմված լինելով տարբեր էթնիկ խմբերից, այսինքն տարբեր լեզուների, կրոնների, ու մշակույթների կրողներից, որպես կանոն միշտ բախվում են էթնիկ ռիսկի երևույթին: Էթնիկ ռիսկը էթնիկ գործոնի բացասական ազդեցությունն է քաղաքական կայունության վրա[2]: Սա բավականին լավ գիտակցում էր ադրբեջանական նորաթուխ բոլշևիկ ղեկավարությունը, ուստի ԱդրԽՍՀ-ի ձևավորման հենց առաջին օրերից որպես կարևոր պետական քաղաքականության ուղենիշ որդեգրվեց էթնոցիդը՝ իր բազմաֆունկցոնալ դրսևորումներով հանդերձ, որն իր հերթին ենթադրում էր մոնոէթնիկ հասարակության «կառուցում», որտեղ կա մեկ դոմինանտ էթնոս և փոքրաթիվ փոքրամասնություններ, հետևաբար և էթնիկ ռիսկերի ցածր մակարդակ:

Ուստի հոդվածում մեր գլխավոր խնդիրն է հասկանալ Խորհրդային Ադրբեջանում գոյություն ունեցող ազգային հարցի էությունը և դրա առանձնահատկությունները:

Հաշվի առնելով ԽՍՀՄ գոյության ողջ շրջանում միութենական հանրապետություններից շատերում առկա ազգային բնույթի խնդիրների լուծման ուղղությամբ կենտրոնական մարմինների իրականացրած քաղաքականությունը, որն հաճախ անտեսում էր ԽՍՀՄ տարածքում ապրող ժողովուրդների ազգային շահերը, էթնիկ պատկանելիությունը և պատմական զարգացման առանձնահատկությունները՝ Ադրբեջանական ԽՍՀ-ում ազգային հարցում իրականացվող քաղաքականությունն ուներ բնորոշ առանձնահատկություններ: Դա պայմանավորված էր այդ տարածքում բնակվող ժողովուրդներից շատերի տեղաբնիկություն և «ադրբեջանցի» կոչվող նորահայտ ազգության կողմից նրանց ծուլելու, ադրբեջանցիների թվական գերակշռությունն ամեն հնարավոր և անհնարին

[1] *Հ.Նահապետյան, Ինչպես ստեղծել ժողովուրդ. Ադրբեջանական ինքնության ձևավորման խնդիրը 20-րդ դարում, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=7012*

[2] *Կ.Պողոսյան, Ա.Միրումյան, Դ.Բաբաջանյան «Քաղաքականություն և քաղաքագիտություն» Պրակ Գ, Երևան, 2006 էջ 60:*

մեթոդներով ապահովելու ուղղությամբ իրականացվող քայլերով: Եվ պատահական չէ, որ ադրբեջանական բոլոր կարգի ձեռնարկումները համահունչ էին պանթյուրքական գաղափարախոսությանը: Համաձայն որի՝ կառավարությունը «պետք է կռթնի բացառապես թուրք տարրին վրա և բացառապես ուժ տա անոր: Մյուս տարրերը գոյություն չունեին իբրև ուրույն ազգեր, անոնք իրավունքներ չունին: Պետք է թրքանան կամ կորսվին»:[1]

Անդրկովկասը պատմական հայրենիքն է հայերի, վրացիների, աբխազների, լեզգիների, թալիշների, թաթերի, ուդիների և այստեղ հայտնված մյուս ազգությունների և ժողովուրդների, որոնք դարեր շարունակ այստեղ են ապրել[2]: Մոնղոլ-թաթարական և թյուրքական ցեղերի ներթափանցումը փոփոխություններ մտցրեցին տարածաշրջանի դեմոգրաֆիական պատկերի մեջ, բայց նրանք երբեք չեն համարվել տեղացի, աբորիգեն ժողովուրդ: Այս տարածաշրջանում բնիկ ժողովուրդներից հայերի և նրանց պատկանող մի շարք տարածքների նկատմամբ Խորհրդային Ադրբեջանի իրականացրած քաղաքականությունը հանդիսանում է ուսումնասիրման առանձին նյութ:

Պարզ պատկերացնելու համար Բաքվի գործելակերպը երկրի բնակչության ազգային կազմի վիճակագրական տվյալների (թե Ադր.ԽՍՀ և թե Ադրբեջանական Հանրապետության ազգային քաղաքականության,) հարցում՝ հարկ է հիշեցնել, որ այնպիսի ազգեր և ազգություններ, ինչպիսիք են օսերը, ասորիները, ջեկերը, գնչուները, լաքերը, եզդիները, լատգալները, մարիները և այլք, սկսած 1926 թվականից և շատ երկար ժամանակով անհետանում են Բաքվի պաշտոնական վիճակագրական տվյալներից: Դե, իսկ թալիշների, քրդերի, խինալուգների, հայերի, ռուսների, հրեաների և այլոց ժողովրդագրությունը բավական պերճախոս վայրիվերումներ ունի, ընդ որում՝ ԽՍՀՄ փլուզումից և տարածաշրջանային դիմակայությունն սկսվելուց դեռ շատ առաջ[3]:

1921 թ. անցկացված առաջին խորհրդային մարդահամարը ցույց տվեց, որ Խորհրդային Ադրբեջանի 1,85 մլն. բնակչությունից 41,0 հազա-

---

[1] *Զարևանդ, Միացյալ և անկախ Թուրանիա:Երևան, 1993, էջ 119:*

[2] *Карапетян С., Арцах, Гардман, Нахиджеван-три единая формула территориальной целостности Восточной Армении, Ереван, 2008, стр. 42.*

[3] *Ա.Մարջանյան, Ադրբեջանական հանրապետության բնակչության աճի տեմպի և ազգային կազմի մասին, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6319*

ը կազմում էին իուդիստ թաթեր, իսկ 91,0 հազարը՝ մուսուլման թաթեր[1], այսինքն ընդհանուր թաթերի թիվը հասել է 132 հազարի, չհաշված քրիստոնյա թաթերին, որոնց թիվը ներկայացված չէ:

Այսպես, ԽՍՀՄ բնակչության 1926թ. դեկտեմբերի 17-ի մարդահամարի՝ «ամենադեմոկրատական և մանրակրկտորեն նախապատրաստված մարդահամարի տվյալներով, որի կազմակերպիչներն ու ղեկավարները հանդիսանում էին խոշոր վիճակագիր-գիտնականներ Օ.Ա. Կվիտկինը, Վ.Գ.Միխայլովսկին և ուրիշները», Ադրբեջանական ԽՍՀ ազգային կազմը ներառում էր 93 ազգ և ազգություն: Ընդ որում, ինչպես հայտնի է, Ադր.ԽՍՀ (որն այն ժամանակ մտնում էր Անդրկովկասյան ԽՂՍՀ-ի մեջ) տիտղոսակիր ազգերը կովկասյան թաթարներն էին («թյուրքերը») և հայերը: 1926թ. մարդահամարի արդյունքների համաձայն՝ «թյուրքերը» կազմում էին Ադր.ԽՍՀ բնակչության ընդհանուր թվի 63.3%-ը (1.185 մլն մարդ)[2]:

1926թ. մարդահամարի տվյալների համաձայն թաթերի թիվը հասել է 28,4 հազարի, այնուհետև 1939 թվի վիճակագրությամբ այլևս չեն ներկայացվում, իսկ արդեն 1979 թ. մարդահամարի տվյալներով նրանց թիվը հասնում է շուրջ 9000-ի: 1989 թվին նրանց թիվը հասնում է 10 հազարի, իսկ 1999 թ.-ին՝ 10,9 հազարի[3]: Թաթերի թվաքանակի հետ կապված նման անհասկանալի տատանումներն ակնհայտ են դարձնում այն հանգամանքը, որ և՛ Խորհրդային Ադրբեջանում, և՛ ներկայիս Ադրբեջանի հանրապետությունում անցկացված մարդահամարները և դրանց արդյունքում ի հայտ եկած վիճակագրական տվյալները չեն արտահայտում ստույգ իրողությունը: Նշենք նաև, որ ոչ պաշտոնական, մոտավոր հաշվարկներով թաթերի թիվը ներկայումս Ադրբեջանի հանրապետությունում կազմում է 500-600 հազար[4]: Նույնն է նաև Շահդաղի ժողովուրդների (ջեկեր, բուդուղներ, խապուտիներ, խինալուգներ, կրիզներ) ճակատագիրը: Ինչպես արդարացիորեն նշում է Աշխարհի ժողովուրդների հանրագիտարանը, «Շահդաղի խմբի ժողովուրդների թվաքանակը կարելի է նշել միայն գնահատաբար, քանի որ Ադրբեջանի պաշտոնական իշխա-

[1] *Мурадян И., Таты-базовая составляющая азербайджанской государственности, http://analitika.at.ua/news/, 30.11.2009.*
[2] *Ա.Մարջանյան, Ադրբեջանական հանրապետության բնակչության աճի տեմպի և ազգային կազմի մասին, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6319*
[3] *Мурадян И., Таты-базовая составляющая азербайджанской государственности, http://analitika.at.ua/news/, 30.11.2009.*
[4] *Նույն տեղում:*

նությունները նրանց դիտարկում և համարում են որպես ադրբեջանցիներ»[1]:

Առավել անհասկանալի է թվում թալիշների թվաքանակի հետ կապված վիճակագրությունը: ԽՍՀՄ 1926թ. մարդահամարի տվյալների համաձայն՝ Ադր.ԽՍՀ-ում ապրում էր 77.3 հազ. թալիշ[2]: 1937թ. մարդահամարի տվյալներով Ադր.ԽՍՀ-ում ապրում էր 99.2 հազ.թալիշ: Երկու տարի անց, համաձայն ԽՍՀՄ 1939թ. մարդահամարի տվյալների, թալիշների թիվն Ադր.ԽՍՀ-ում նվազում է մինչև 87.5 հազար: Ինչու 1939 թ.-ի մարդահամարի տվյալներով 87,5 հազարի հասնող թալիշները այնուհետ այլևս չեն հիշատակվում մարդահամարներում որպես առանձին ժողովուրդ: Նրանք վերանալ չէին կարող, քանզի նրանց զբաղեցրած տարածքում որևէ բնական աղետի կամ կոտորածների վերաբերյալ տեղեկություններ չունենք, պատասխանը մեկն է՝ նրանք սկսում են գրանցվել որպես ադրբեջանցի: Թալիշների անհետանալը Ադրբեջանի բնակեցնող ժողովուրդների շարքից «պաշտոնականացրեց» Սովետական Մեծ Հանրագիտարանը, քողարկելով ակնհայտ խեղաթյուրումը հետևյալ տողերով. «ԽՍՀՄ-ում թալիշները գրեթե միաձուլվել են ադրբեջանցիներին, որոնց նրանք մոտ են նյութական և հոգևոր մշակույթով և առանձնացված չեն 1970 թ.-ի մարդահամարում»[3]: Դարերի պատմություն ունեցող թալիշների և քոչվոր թյուրքերի հետնորդների՝ նորահայտ ադրբեջանցիների միակ ընդհանրությունը կրոնն էր, որը չէր կարող հիմք հանդիսանալ մշակութային միաձուլման համար:

Այնուամենայնիվ, 1989 թ.՝ Գորբաչովյան «վերակառուցման» ալիքի ներքո «ձուլված» թալիշ ժողովուրդը կրկին հայտնվում է վիճակագրական տվյալներում: Այդ ժամանակ նրանք թվագրված էին 21,2 հազար, իսկ 1999 թ. տվյալներով թալիշների թիվը հասնում էր 76,8 հազարի[4]: Հասկանալի է՝ 10 տարվա ընթացքում նման քանակական աճ գրանցվել չէր կարող, սակայն կենտրոնական իշխանության որոշակի թերացումը հանգեցրեց այն բանին, որ «ձուլված» թալիշները կրկին սկսեցին արձանագրվել որպես թալիշներ:

---

[1] *Народы мира. Энциклопедия. М.: ОЛМА, 2007,с. 129.*
[2] *Всесоюзная перепись населения 1926 года, М., Издание ЦСУ Союза ССР, 1928-29. Том 14, с. 11-13.*
[3] *Большая Советская Энциклопедия, том 25, Москва, 1976, стр. 237.*
[4] *Мелик-Шахназарян Л., Азербайджан. Толерантные жонглеры от статистики, http://www.yerkramas.org/news/, 30.11.2009.*

1959 թ.-ի մարդահամարի տվյալներով ուդիները ներկայացված են 3202 մարդ[1], 1970 թ.-ին՝ 5492, իսկ 1979 թ.-ին՝ 5841[2]: Անհասկանալի է՝ ինչպես 100 տարվա ընթացքում ուդիների թիվը ավելացել է մոտ 350-ով, մինչդեռ ադրբեջանցիների թիվը՝ գրեթե մեկ միլիոնով՝ 3776778-ից հասնելով 4708832-ի[3]: 1989 թ.-ի մարդահամարի տվյալներով ուդիների թիվը Ադրբեջանում հասել է 6000[4]: Ադրբեջանական ուծացման քաղաքականության արդյունքում իրենց պատմական հայրենիքում ապրող ուդիները ներկայումս կանգնած են անհետացման իրական վտանգի առջև:

Անդրադառնանք լեռնային հրեաների թվաքանակի հետ կապված խնդիրներին: Դժվարությունն այն է, որ նրանց թվաքանակը նշվում է կամ եվրոպական հրեաների կամ էլ թաթերի անվան տակ: Հիմնվելով 1959 և 1970 թվերի մարդահամարների տվյալների և տարբեր գնահատականների վրա՝ 1970թ.-ին լեռնային հրեաների թիվը կազմել է շուրջ 50-70 հազար[5]: Ընդ որում 1970 թ. մարդահամարի ժամանակ 17109, իսկ 1979 թ.-ին մոտ 22000 լեռնային հրեաներ գերադասել են անվանել իրենց թաթեր՝ խուսափելու համար կենտրոնական իշխանությունների կողմից հրեաների դեմ ուղղված խտրականության քաղաքականությունից[6]: Սակայն, եթե ուշադրություն դարձնենք, կտեսնենք, որ թաթերը 1970թ.-ին ներկայացված են 7,8 հազարով, իսկ 1979 թ.-ին՝ 8,8 հազարով: Այսինքն՝ թաթերի թվաքանակի արհեստական նվազեցման հետ մեկտեղ չեն գրանցվել տվյալ ժամանակահատվածում իրենց թաթ անվանած հրեաները: Սա իրականության քողարկմանն ուղղված ադրբեջանական վիճակագրության հերթական դրսևորումներից է: Բացի այդ 1989 թ. Ադրբեջանում գրանցվել են 30,8 հազար հրեա, իսկ 1999 թ.-ի մարդահամարի տվյալներով՝ 8,9 հազար: Մինչդեռ եվրոպական «Սոխնուտ» կազմակերպության տվյալներով 1989-99 թթ. Ադրբեջանից հեռացել են շուրջ 31,3

---

[1] *Центральное статистическое управление при Совете Министров СССР. Итоги всесоюзной переписи населения 1959 года. Распределение населения по национальности и родному языку, Аз. ССР, Москва, 1963, таблица 53, стр. 134-135.*

[2] *Центральное статистическое управление Азербайджанской ССР. Итоги всесоюзной переписи населения 1979 года по Аз. ССР. Численность населения от дельных национальностей по Аз. ССР в 1970 и 1979 гг., Баку, 1981, таблица 19, стр. 149-150.*

[3] *Նույն տեղում:*

[4] *Мамедов А., Некоторые аспекты современной этнической ситуации в Азербайджане, http://www.ca-c.org/journal/, 30.11.2009.*

[5] *Горские евреи-статья на сайте Краткой Еврейской Энциклопедии, http://lingvoforum.net/, 25.11.2009.*

[6] *Նույն տեղում, http://lingvoforum.net/:*

հազար հրեա[1]: Ներկայումս լեռնային հրեաները հաշվվում են մոտ 35000[2]:

Ինչ վերաբերում է ինգիլոներին, ապա պաշտոնական փաստաթղթերով նման ժողովուրդ նույնիսկ գոյություն չունի. նրանք անցկացված մարդահամարներում ընդհանրապես չեն հիշատակվում: Ներկայումս ինգիլոներիթիվը կազմում է շուրջ 10000[3], ամեն դեպքում ըստ ադրբեջանական հեղինակներից մի քանիսի հաղորդած տեղեկությունների: Ցավոք, մենք այլ հավաստի տվյալներ չունեն քինգիլոների ստույգ թվաքանակի հետ կապված:

Քրդերի թիվը 40,9 հազարից 13 տարվա ընթացքում կրճատվել է հասնելով 6000-ի: Նման քանակական նվազում անհնար են այն պայմաններում, երբ 20-ական թթ. քուրդ մուսուլմանների առանձին ընտանիքներ տեղափոխվում էին Հայաստանից Ադրբեջան, քանի որ Ադրբեջանում մեծամասամբ մուսուլմաններ էին բնակվում: Հաշվի առնելով, որ 20-ական թթ. կեսերին քրդերի թիվը Հայաստանում և Վրաստանում աճել էր 3,5-ից 4 անգամ[4], ինչպես նաև քրդերի ծնելիության բարձր մակարդակը՝ նրանց թիվը միանշանակորեն պետք է աճեր, այլ ոչ թե կրճատվեր շուրջ յոթ անգամ: Իսկ, 1979 թ. մարդահամարի «տեղեկագրում Ադրբեջանում քրդերի թիվը չի հիշատակվում», որն ադրբեջանցի տխրահռչակ պատմաբան Աբասովը պատճառաբանում է ասելով, որ«հավանաբար, հաշվի է առնվել նրանց նվազման միտումը»[5]:1989 թ. տվյալներով քրդերի թիվը Ադրբեջանում կազմել է ավելի քան 12000 մարդ[6], մինչդեռ ոչ պաշտոնական, մոտավոր հաշվարկներով նրանց թիվը հասնում է 350-400 հազարի[7]:

Այժմ անդրադառնանք Դաղստանյան ժողովուրդներից լեզգիների, ավարների և ցախուրների վերաբերյալ եղած վիճակագրական տվյալներին: Այսպես, եթե լեզգիների տեսակարար կշիռը 1921 թ. վիճակագրությամբ կազմել է 3,5% (111 հազար մարդ), ապա 1939 թ. կրճատվել է

---

[1] *Мелик-Шахназарян Л., Азербайджан. Толерантные жонглеры от статистики, http://www.yerkramas.org/news/, 30.11.2009.*
[2] *Նույն տեղում,http://www.ca-c.org/journal/.:*
[3] *Еще раз об азербайджанских курдах, http://www.ezidxane.ru/, 30.11.2009.*
[4] *Еще раз об азербайджанских курдах, http://www.ezidxane.ru/, 30.11.2009*
[5] *"Коммунист Азербайджана", 1989, № 2, с. 83.*
[6] *Мусабеков Р., Становление независимого азербайджанского государство и этнические меньшиства, http://www.shakarov-center.ru/publications/azrus/, 30.11.2009.*
[7] *Еще раз об азербайджанских курдах, http://www.ezidxane.ru/, 30.11.2009.*

հասնելով 2,4%ի[1]: 1959 թ.-ի մարդահամարի տվյալներով լեզգիները ներկայացված են 98211[2], իսկ 1970 և 1979թթ վիճակագրական տվյալներով լեզգիները կազմում են համապատասխանաբար 137250 և 158057 մարդ[3]: Թվում է, որ քանակական աճ է գրանցվել և նրանց վերաբերյալ վիճակագրական տվյալները արժանահավատ են, սակայն էականորեն նվազել է նրանց տեսակարար կշիռը: 1989 թ. տվյալներով լեզգիները կազմում են 171 հազար մարդ, իսկ 1999 թ. տվյալներով՝ մոտ 180 հազար[4]: Չնայած որ լեզգիների տեսակարար կշիռը կրճատվել է հասնելով 2,2%ի, հայ և ռուս բնակչության տեսակարար կշռի կրճատման պայմաններում նրանք իրենց թվաքանակով ներկայումս երկրորդն են ադրբեջանցիներից հետո[5]:

Ինչ վերաբերում է ավարներին, ապա նշենք, որ 19-րդ դարի վերջին ներկայիս Ադրբեջանի հանրապետության տարածքում բնակվել են շուրջ 60000 ավար: ԱԴՀ-ի շրջանում (1918-1920 թթ.) ավարների թիվը նշվում էր 15000[6]: 1959 թ.-ի մարդահամարի տվյալներով ավարների թիվը կազմում է են 17254 մարդ[7], իսկ 1970 և 1979 թթ. վիճակագրական տվյալներով նրանց թվաքանակը ներկայացված է 30735 և 35991 մարդ[8]: 1989 թ. ավարների թիվը Ադրբեջանում հասնում է 44 հազարի, իսկ 1999 թ.՝ 50,9 հազարի[9]: ներկայիս Ադրբեջանի Հանրապետությունում հասնում է մոտ 102,4 հազարի[10]: Սա նշանակում է, որ Խորհրդային Ադրբեջանի ասիմիլիացիոն քաղաքականության արդյունքում, չնայած ավարների

---

[1] *Мусабеков Р., նշված տեղում,* http://www.shakarov-center.ru/publications/azrus/, 30.11.2009.:

[2] *Центральное статистическое управление при Совете Министров СССР. Итоги всесоюзной переписи населения 1959 года. Распределение населения по национальности и родному языку, Аз. ССР, Москва, 1963, таблица 53, стр. 134-135.*

[3] *Центральное статистическое управление Азербайджанской ССР. Итоги всесоюзной переписи населения 1979 года по Аз. СССР. Численность населения отдельных национальностей по Аз. ССР в 1970 и 1979 гг., Баку, 1981, таблица 19, стр. 149-150.*

[4] *Мусабеков Р., նշված տեղում,* http://www.shakarov-center.ru/publications/azrus/, 30.11.2009.:

[5] *Мусабеков Р., նշված տեղում,* http://www.shakarov-center.ru/publications/azrus/, 30.11.2009.:

[6] *Мелик-Шахназарян Г., Аварцы в Азербайджане,* http://www.mitq.org/, *30.11.2009.*

[7] *Центральное статистическое управление при Совете Министров СССР. Итоги всесоюзной переписи населения 1959 года. Распределение населения по национальности и родному языку, Аз. ССР, Москва, 1963, таблица 53, стр. 134-135.*

[8] *Центральное статистическое управление Азербайджанской ССР. Итоги всесоюзной переписи населения 1979 года по Аз. ССР. Численность населения от дельных национальностей по Аз. ССР в 1970 и 1979 гг., Баку, 1981, таблица 19, стр. 149-150.*

[9] *Мелик-Шахназарян Г., Аварцы в Азербайджане,* http://www.mitq.org/, 30.11.2009.

[10] *Նշված տեղում,,*http://www.mitq.org/, *30.11.2009.:*

աճող թվին, այնուամենայնիվ նրանց իրական թվաքանակը զգալիորեն կրճատված է ներկայացվում պաշտոնական վիճակագրական աղբյուրներում:

Ցախուրների տեսակարար կշիռը 1926 թ. կազմել է ընդհանուր բնակչության 0,7%[1]: 1959թ. վիճակագրական տվյալներով նրանց թիվը կազմել է 2876 մարդ[2], իսկ 1970 և 1979 թթ. մարդահամարի տվյալներով ցախուրների թվաքանակը ներկայացված է համապատասխանաբար 6208 և 8546 մարդ[3]: Արդեն 1989 թ. տվյալներով ցախուրների թիվը կազմել է 13,3 հազար, սակայն նրանց տեսակարար կշիռը զգալիորեն նվազել էր՝ հասնելով 0,2%-ի[4], իսկ 1999 թ. մարդահամարի տվյալներով ցախուրների թիվը հասնում է 15,9 հազարի[5]: Նշենք նաև, որոչ պաշտոնական տվյալներով ցախուրների թիվը միայն Զաքաթալայի շրջանում կազմել է 31,9 հազար[6]:

Ինչ վերաբերում է շահդաղյան խմբի ժողովուրդներին, ապա նրանց մասին տեղեկությունները սահմանափակ են: Զեյդլիցի հաղորդած տվյալներով, որոնք քաղված են 1886 թ. ընտանեկան ցուցակներից, շահդաղյան խմբի ժողովուրդների քանակը այսպիսին է՝ բուդուգներ-3420, կրիզներ-7767, խինալիգներ-2315[7]: 1926 թ. մարդահամարի տվյալներով բուդուգները կազմում են 2000, կրիզները՝ 2600, խինալիգները ընդամենը՝ 100 մարդ: 1959 թ. մարդահամարի ժամանակ նրանք չեն հիշատակվում որպես առանձին ժողովուրդներ[8]:

Ստորև ներկայացնում ենք մի գծապատկեր, ուր հստակորեն երևում է, որ մարդահամարից մարդահամար հետևողականորեն և անշեղորեն ավելացվում է «ադրբեջանցիների» թիվը Ադր.ԽՍՀ բնակչության կազմում: 1959թ. պաշտոնական տվյալների համաձայն՝ այն կազմել է հան-

---

[1] *Мусабеков Р., Становление независимого азербайджанского государство и этнические меньшиства, http://www.shakarov-center.ru/publications/azrus/, 30.11.2009.*

[2] *Центральное статистическое управление при Совете Министров СССР. Итоги всесоюзной переписи населения 1959 года. Распределение населения понациональности и родномуязыку, Аз. ССР, Москва, 1963, таблица 53, стр. 134-135.*

[3] *Центральное статистическое управление Азербайджанской ССР. Итоги всесоюзной переписи населения 1979 года по Аз. СССР. Численность населения отдельных национальностей по Аз. ССР в 1970 и 1979 гг., Баку, 1981, таблица 19, стр. 149-150.*

[4] *Мусабеков Р., նշված տեղում, http://www.shakarov-center.ru/publications/azrus/, 30.11.2009.*

[5] *Мелик-Шахназарян Г.,նշված տեղում, http://www.mitq.org/, 30.11.2009.*

[6] *Газета "Черновик", http://www.chernovik.net/, 30.11.2009.*

[7] *Народы Кавказа (2), под. ред. Б. А. Гарданова, Москва, 1962, стр. 199.*

[8] *Նույն տեղում:*

ռապետության բնակչության ընդհանուր թվի 67%-ը, իսկԽՍՀՄ գոյության վերջում, 1989թ. մարդահամարի տվյալներով, «ադրբեջանցիների» բաժինն արդեն 83% էր: Նույն ժամանակահատվածում հայ բնակչության բաժինը նվազում է կրկնակի՝ 1959թ.12%-ի փոխարեն կազմելով 6% 1989-ին[1]:

*Գծապատկեր*




Իսկ, ներկայումս Ադրբեջանում ազգային փոքրամասնությունների ձուլումը արագացնելու համար Գիտությունների ազգային ակադեմիայի Տեղեկատվական տեխնոլոգիաների ինստիտուտում 2010 թ. վերջին մշակվել է «էթնիկական փոքրամասնությունների ազգանունների վերջավորության փոփոխությանմասին» օրենքի նախագիծ, որը միտված է Ադրբեջանում դեռ գոյատևող ազգային փոքրամասնությունների (լեզգիներ, ավարներ, ծախուրներ, թալիշներ, թաթեր, ուդիներ, քրդեր և այլն) ինքնագիտակցության ջնջմանը և նրանց ձուլմանը[2]:

Ազգանունների թյուրքականացումը միտված է կասեցնելու կովկասյան ու իրանական ժողովուրդների էթնիկ ինքնագիտակցության վերազարթոնքի գործընթացը և ազգանունների վերափոխման միջոցով արագացնելու նրանց ձուլումը:

Այսպիսով, ներկայացված վիճակագրական տվյալները ակնհայտ են դարձնում Խորհրդային Ադրբեջանի ազգային հարցի լուծման մեթոդները:

---

[1] *Ա.Մարջանյան, Ադրբեջանական հանրապետության բնակչության աճի տեմպի և ազգային կազմի մասին, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6319*

[2] *http://www.vesti.az/news.php?id=61188*

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոհիշյալ ժողովուրդները շարունակում են ապրել նաև ներկայիս Ադրբեջանի Հանրապետության տարածքում, իսկ ադրբեջանցի միաէթնիկ հանրություն այդպես էլ չի ձևավորվել՝ կարելի է վստահ արձանագրել՝ նման քաղաքական մեթոդները կիրառվում են նաև մերօրյա Ադրբեջանում:

## Ամփոփում

Հոդվածը նվիրված է Ադրբեջանական ԽՍՀ-ում առկա ազգային հարցի և դրա լուծման ադրբեջանական մեթոդների դրսևորման գործընթացների ընդհանրական պատմությանը: Այն դիտարկում է նաև Ադրբեջանական ԽՍՀ-ի զբաղեցրած տարածքում բնակվող էթնիկական տարբեր խմբերի ժողովրդագրական պատկերը և էթնիկ խմբերի նկատմամբ վարվող ադրբեջանական էթնոցիդ քաղաքականության պատճառներն ու հետևանքները:

## Этническая мозаика Советского Азербайджана и азербайджанские методы решения национального вопроса

Ваагн Дадаян

## Резюме

***Ключевые слова:*** *Карабах, этнополитика, национальный, этнический, группа, Азербайджан, демографический, талыши, таты, курды, лезгины, этно имя.*

Статья посвящена существующему в Азербайджанской ССР национальному вопросу и истории общих процессов и методов его решения со стороны Азербайджана.

Она также рассматривает демографическую картину проживающих разных этнических групп на территории Азербайджанской ССР и причины и последствия азербайджанской этноцидной политики.

## The ethnic mosaic of Soviet Azerbaijan and the Azerbaijani methods of solving national issue

Vahagn Dadayan

## Summary

***Key words:*** *Karabakh, ethnopolitical, national, ethnic, group, ethno name, Azerbaidjan, demographic, Talishs, Tats, Kurds, Lezgis.*

The article is devoted to the national issue existed in Azerbaijani SSR and the history of general processes of implementing Azerbaijani methods of its solution. It discusses also the demographic picture of the ethnic groups living in the territory of the Azerbaijani SSR, as

well as, the causes and consequences of the Azerbaijani ethnocide policy conducting towards those ethnic groups

# «ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈՉՅԱՆ» ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ[1]

**Արարատ Վարդանյան**
*Պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր*
*ԱրՊՀ*

***Բանալի բառեր՝*** *«Հովարդ Կարագյոզյան» հաստատություն, բարեգործություն, Հայաստանի Հանրապետություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, առողջապահական, սոցիալական, կրթամշակութային ծրագրերի իրականացում*

1988 թվականի դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցավ ավելի քան 9 բալ հզորությամբ ավերիչ երկրաշարժ: Այն ընդգրկեց հանրապետության տարածքի 1/3 մասը՝ մեկ միլիոն 130 հազար բնակչությամբ: Ռոպեների ընթացքում լրիվ կամ մասնակի ավերվեցին Լենինականը, Սպիտակը, Կիրովականը, Ստեփանավանը, հարյուրից ավելի ավաններ ու գյուղեր: Ավերվեց հանրապետության ամբողջ բնակֆոնդի մոտ 17%-ը: Երկրաշարժի գոտում շարքից դուրս եկան ջերմամատակարարման, էներգամատակարարման բոլոր համակարգերը, կապի, տրանսպորտի և կենցաղսպասարկման ծառայությունները: Ավերվեց ավելի քան 170 արդյունաբերական ձեռնարկություն: Ծանր վնաս կրեց գյուղատնտեսությունը, քանդվեցին անասնապահական շինությունները, ոչնչացավ անասունների մեծ մասը: Շարքից դուրս եկավ գյուղատնտեսական մթերքներ վերամշակող 80 ձեռնարկություն: Տարերային աղետը հանրապետության ժողովրդական տնտեսությանը հասցրեց ավելի քան 13 մլրդ ռուբլու վնաս: Պաշտոնական նվազեցված տվյալներով զոհվեց ավելի քան 25 հազար մարդ, 530 հազարը դարձավ անօթևան[2]:

Երկրաշարժից անմիջապես հետո տարբեր երկրներից հումանիտար օգնության բեռներով Հայաստան էին գալիս օդանավեր, գնացքներ, ավտոմեքենաների շարասյուներ: Համակողմանի օգնությանը մասնակցում

[1] *Հոդվածը ընդունված է 24.11.14:*

[2] *Մինասյան Է., Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Եր., 2014, էջ 87: Տես նաև Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, պրոֆ. Հր Ռ.Սիմոնյանի խմբ., Եր., 2012, էջ 721-722, Մանուկյան Մ., Երկրաշարժ , Եր., 1989, էջ 3,4,5,6:*